ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 հոկտեմբերի 2013 թվականի թիվ 122 -Ա

2013Թ. ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ 'ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ' ԾՐԱԳՐՈՎ ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ' ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՓԱՏԱՏՈՆ ' ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի պահանջներով, 2013թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով 'Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը' ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին հատկացված միջոցների հաշվին ' Երիտասարդական ուսանողական փառատոն ' միջոցառման կազմակերպման նպատակով՝

որոշում եմ.

1. 2013թ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով 'Պետական աջակցություն մշակութային միջոցառումների իրականացմանը' ծրագրով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանին նախատեսված միջոցներից 200.0 հազ. դրամ գումարն ուղղել ' Երիտասարդական ուսանողական փառատոն ' միջոցառման կազմակերպմանը:
2. Հանձնարարել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանին. ' Երիտասարդական ուսանողական փառատոն ' միջոցառումը կազմակերպել ՀՀ Տավուշի մարզպետի կողմից հաստատված ծրագրին համապատասխան:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

ք. Իջևան

-09- հոկտեմբերի 2013թ.